ՀԱՆԳՈՒՑՅԱԼ Տ. ԴԱՎԻԹ Ե ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ

ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի նոյեմբերի 9-ին ի Տեր հանգչաւ համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Տ. Տ. Դաւիթ Ե-ը:

Նոյեմբերի 14-ին, երկուշաբթի օրը, Հայոց Հայրապետը, ուղեկցությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի, վրաստանյան թեմի թեմական առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի և Մայր Աթոռի միաբան տ. Անանիա վարդապետ Արաբաջյանի, մեկնեց Թբիլիսի՝ մասնակցելու թաղման արարողությանը:

Նոյեմբերի 15-ին, երեքշաբթի օրը, ս. Սիոն Մայր տաճարում կատարվեց նորոգ հանգուցյալ Տ. Դավիթ Ե կաթողիկոսի թաղման արարողությունը: Այս տխուր առիթով Հայոց Հայրապետը, խոսք առնելով, Հայաստանյայց եկեղեցու և Մայր Աթոռի ցավակցությունները հայտնեց վրաց օրթոդոքս եկեղեցուն և հոգևորականությանը՝ նրանց կրած ծանր կորուստի համար, և աղոթեց հանգուցյալի հոգու խաղաղության համար:

Նոյեմբերի 16-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ:

Նոյեմբերի 20-ին, կիրակի օրը, ս. Էջմիածնի Մայր տաճարում, հավարտ պատարագի, Հայոց Հայրապետի նախագահությամբ և ի ներկայության հավատացյալների խուռն բազմության, կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն՝ նվիրված հանգուցյալ Դավիթ Ե կաթողիկոսի հիշատակին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
22 նոյեմբեր 1977 թ.